

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
<<ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԿ

## ՏԵՂԵԿԱՏՈՒ – 2009

Շիրակի մարզում գործող քաղաքացիական  
հասարակության  
կառույցների տեղեկատու

Գյումրի  
2009

Քաղաքական մշակույթի և համաձայնությունների  
զարգացման <<Շիրակ կենտրոն>> ՀԿ-ն ոչ կառավարական,  
անկախ, շահույթ չհետապնդող կազմակերպություն է, գրանցվել է  
2006թ. հունվարի 5-ին (գրանցման վկայական՝ 03Ա 070504)՝  
<<Հայաստանի Հանրապետության հասարակական  
կազմակերպությունների մասին>> օրենքի պահանջներին  
համապատասխան, տեղակայված է Գյումրիում:  
<<Շիրակ կենտրոնի>> գործունեությունը նպատակաուղղված է  
Հայաստանում ժողովրդավարության հաստատմանը, մարզերում  
սոցիալ քաղաքական կարևորագույն խնդիրների լուծմանը,  
հասարակության ու պետության, մասնավորապես  
տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման  
մարմինների և համայնքների միջև առկա տարաձայնությունների  
հարթեցմանը, քաղաքական հետազոտությունների,  
վերլուծությունների իրականացմանը, նոր ծրագրերի մշակմանը,  
կոալիցիաների ձևավորմանն ու հակամարտությունների  
լուծմանը: Կենտրոնը նպատակ ունի աջակցել  
հասարակական տարբեր խմբերին ու խավերին՝ օգնելով  
բարդ ու վերափոխվող քաղաքական պայմաններում նոր  
գաղափարների ու ռազմավարությունների ընկալման  
կարողությունների ձեռքբերմանն ու  
կատարելագործմանը:

**Քաղաքական մշակույթի և համաձայնությունների  
զարգացման <<Շիրակ կենտրոն>> ՀԿ**

Շիրակի մարզ, 3101, Գյումրի  
Տիգրան Մեծի 202., ք. 5  
Հեռ. +(374 312) 5-15-42  
+(374 312) 6 -69-92  
+(37491) 45-13-37  
E-mail: shirakcentre@rambler.ru  
Վեբ կայք. [www.shirakC.org](http://www.shirakC.org)

Հեղինակային  
և խմբագրական խումբ  
<<Շիրակ կենտրոնի>> նախագահ՝  
Վահան Թումասյան  
Ծրագրի ղեկավար՝  
Աիդա Խաչատրյան  
Ծրագրի համակարգող՝  
Նարեկ Թումասյան  
Աշխատանքային խումբ՝  
Համլետ Հովհաննիսյան,  
Արմեն Թումասյան

Շիրակի մարզում գործող քաղաքացիական  
հասարակության կառույցների  
տեղեկատու

Գյումրի 2009

Մույն տեղեկատուին պարունակում է Շիրակի մարզում գործող քաղաքացիական հասարակության կառույցների, մասնավորապես հասարակական, կրոնական կազմակերպությունների, հիմնադրամների և կուսակցությունների գործունեության վերաբերյալ ամփոփ, անաչառ և համադրելի տեղեկատվություն: Տեղեկատուն կազմվել է Քաղաքական մշակույթի և համաձայնությունների զարգացման <<Շիրակ կենտրոն>> ոչ առևտրային կազմակերպության (ՀԿ) կողմից մշակված հարցաթերթիկին քաղաքացիական հասարակության կառույցների կողմից տրված պատասխանների, նրանց պաշտոնական հրապարակային փաստաթղթերի, ինչպես նաև տարբեր աղբյուրներից մեր կողմից ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Տեղեկատուն նախատեսված է հասարակության լայն շրջանակների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կառույցների, միջազգային կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար:

Այս տեղեկատուի համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքումը, մշակումը և հրատարակումը հնարավոր է դարձել իրականացնել Ա.Դ.ՄԱԽԱՐՈՎԻ անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի <<Քաղաքացիական հասարակության նախաձեռնություններ>> ծրագրի շրջանակներում ICCO և EED կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ (ICCO-EED/ SG 2009, Gyumri-22):

Տեղեկատուի հրատարակմանը օժանդակել են՝  
Հանրային խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանը,  
<< Շիրակ >> ՓԲԸ նախագահ Միսակ Բալասանյանը:

Տեղեկատուի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակին և հնարավոր է, որ չհամընկնեն Ա.Դ. Մախարովի անվան ՄԻՊ հայկական կենտրոնի տեսակետների հետ:

Տեղեկատուն ազատորեն, թղթային կամ էլեկտրոնային եղանակով, կարող է բազմացվել, տարածվել և օգտագործվել ոչ առևտրային նպատակով, միայն այն պայմանով, որ օգտագործելիս, որպես աղբյուր, հղում կատարվի տեղեկատուի հեղինակին՝ <<Շիրակ կենտրոն>> ՀԿ-ին:

© Քաղաքական մշակույթի և համաձայնությունների զարգացման  
<<Շիրակ կենտրոն>> ՀԿ

## Նախաբան

Քաղաքացիական հասարակության կարևորագույն ինստիտուտների (հասարակական, կրոնական կազմակերպություններ, հիմնադրամներ և կուսակցություններ) գործունեության վերաբերյալ անաչառ, մատչելի և արդի տեղեկատվության հանրայնացումը, մեր կարծիքով, ունի կարևոր նշանակություն քաղաքացիական հասարակության ձևավորման, կայացման և հզորացման գործում: Նրանց առանձնահատկությունների, ծրագրային նպատակների ու խնդիրների, կատարած գործունեության մասին հանրությանն իրազեկումը կնպաստի, որպեսզի վերջիններս ընկալվեն հասարակության խնդիրները լուծելու այլընտրանքային միջոցներ: Մենք հուսով ենք, որ այս տեղեկատուն կնպաստի նաև նրանց գործունեության թափանցիկության բարձրացմանը:

Գաղտնիք չէ, որ քաղաքացիական հասարակության այս կարևորագույն ինստիտուտները Հայաստանում և առհասարակ հետխորհրդային երկրներում, հիմնականում ծնունդ առան կամ լեզալացվեցին խորհրդային կայսրության փլուզումից անմիջապես հետո: Ներկայումս այդ՝ ոչ առևտրային կազմակերպությունների թվաքանակը մեր երկրում հաշվվում է հազարներով և առաջին հայացքից ավելի քան բավարար է:

Շիրակի մարզում ևս քաղաքացիական հասարակության կառույցները մեծ թիվ են կազմում, սակայն հասարակությունը, որին ծառայելու նպատակով էլ, ի վերջո, ստեղծվում և գործում են վերջիններս, որպես կանոն, պատշաճ տեղեկացված չէ ոչ միայն նրանց գործունեությունից, այլ նաև գտնվելու ու գործելու վայրերից: Դրանում մեղքի բաժին ունեն նաև հենց իրենք՝ ՀԿ-ները, հիմնադրամները և հատկապես կուսակցությունները, քանզի անհրաժեշտ ջանքեր չեն թափում իրենց գործունեությունը հանրայնացնելու ուղղությամբ: Այնինչ նրանք կոնկրետ շահերի պաշտպանությունից և ծառայություններ մատուցելուց բացի, լինելով կամավորության վրա հիմնված կառույցներ, նախաձեռնությունների ավելի լայն մաս են կազմում և նրանց հզորացումը ուղիղ համեմատական է ժողովրդավարության խորացման ու քաղաքացիական հասարակության ձևավորման աստիճանին:

Հարկ է նշել, որ գրեթե բացակայում է քաղաքացիական հասարակության կառույցների փոխշահավետ համագործակցությունը տեղական, մարզային իշխանությունների, գործարարների հետ:

Հասարակությունը, և հատկապես խոցելի խմբերը, նրանց գործունեության մասին տեղեկատվություն ստանալու և փոխգործակցություն ծավալելու համար անհրաժեշտ և դյուրին մեխանիզմներ չունեն:

Այս ծրագրի նպատակը, որն, ըստ էության, ոչ միայն տեղեկատուի, այլև յուրատեսակ և ամփոփ տեղեկատվական բազայի ստեղծումն է, կարող է փոխել առկա հանրային քաղաքականությունը՝ նպաստելով փոխշահավետ և փոխլրացման սկզբունքով հարաբերությունների հաստատմանը քաղաքացիական հասարակության կառույցների և տեղական, մարզային

իշխանությունների, գործարարների միջև: Տեղեկատուի միջոցով հասարակությանն առավել մատչելի կդառնա ՀԿ-ների, հիմնադրամների, կուսակցությունների գործունեության մասին տեղեկատվություն ստանալը և ցանկության դեպքում նրանց դիմելն ու անդամագրվելը:

Ի տարբերություն մեր կողմից 2006 թվականին տպագրված նմանատիպ տեղեկատուի, նորը պարունակում է առավել մեծ թվով ՀԿ-ների մասին տեղեկատվություն, ինչպես նաև ավելացվել են նույնատիպ տեղեկություններ հիմնադրամների, կրոնական կազմակերպությունների և կուսակցությունների մասին:

Մեր կողմից լրացումներ են կատարվել նաև Շիրակի մարզի քաղաքացիական հասարակության սեկտորի ուսումնասիրությունների և վերլուծությունների բաժնում:

Կրկնապատկվել է տեղեկատուի տպաքանակը: Այն ամբողջությամբ տեղադրվելու է նաև ինչպես մեր՝ **www.shirakC.org**, այնպես էլ գործընկեր կազմակերպությունների վեբ կայքերում:

## **Քաղաքացիական հասարակության կառույցներ**

Պարզ ճշմարտություն է, որ քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարական քաղաքական մշակույթը կշարունակվեն մնալ հեռավոր և անհասանելի երազանք, քանի դեռ գոյություն չունեն քաղաքացիական հասարակության ամուր կառույցներ: Իսկ վերջիններիս կայացման և հզորացման համար նախ և առաջ անհրաժեշտ է փոխել մեր երկրում առկա հանրային քաղաքականությունը՝ նպաստելով փոխշահավետ և փոխլրացման սկզբունքներով հարաբերությունների հաստատմանը քաղաքացիական հասարակության կառույցների և տեղական, մարզային իշխանությունների ու գործարարների միջև:

Ցավոք, Հայաստանում, հասարակության, ինչպես նաև տեղական և մարզային իշխանությունների կողմից քաղաքացիական հասարակության կառույցները դեռևս չեն ընկալվում որպես հասարակության խնդիրները լուծելու այլընտրանքային միջոցներ: Մարզերում և համայնքներում առկա հիմնախնդիրների հանրայնացմանն ու ըստ կարևորության դասակարգմանը և քաղաքացիական հասարակության կառույցների ու համայնքի շահագրգիռ անձանց կողմից համատեղ լուծման ուղիների որոնմանը նվիրված քննարկումներն ու միջոցառումները նույնպես գրեթե բացակայում են:

## **Մտավոր աղետի հետևանքները քաղաքացիական հասարակության կայացման ճանապարհին**

Պատմական փաստերը վկայում են, որ քաղաքները ևս մահանում են, ընդ որում ոչ միայն պատերազմների ու բնական տարերքների մոլեգումների պատճառով: Մեր սերնդի համար կարծես ցավագին իրողության է վերածվում՝ դառնալու <<մահացող քաղաքի>> ակամա ականատեսն ու վկան: Քաղաքների <<մահացության>> գլխավոր պատճառներից մեկը հոգևոր աղետն է՝ հուսահատությունն ու հուսալքումը: Զուրկ ստեղծագործելու և աշխատելու վերջին հնարավորությունից, հուսալքված բնակչությունը երես է թեքում հայրենիքից, սեփական սրբություններից ու ազգային երազանքներից և դիմում զանգվածային արտագաղթի: Իհարկե, նման պարագաներում արտագաղթի ճանապարհը առաջին հերթին բռնում է մտավորական խավը, ինչը և տեղի ունեցավ մեր պարագայում: Ակնհայտ է, որ Գյումրիին ևս ենթարկվել է մտավոր աղետի: Այն սկսվել էր երկրաշարժից դեռ շատ առաջ, որի ծագման հիմնական պատճառը խորհրդային կենտրոնաձիգ իշխանական համակարգն էր, երբ ամեն լավագույնը փորձում էին կուտակել ու կենտրոնացնել մայրաքաղաքներում՝ լինել դա մշակույթի, սպորտի, գիտության, արդյունաբերության կամ որևէ այլ բնագավառ: Իհարկե, Գյումրիից մտավոր ներուժի արտահոսքն էլ ավելի զանգվածային դարձավ 1988-ի երկրաշարժի և դրան հետևած տիրաառչակ իրադարձությունների պատճառով:

Պետք է ևս մեկ ճշմարտություն հաշվի առնենք. գյումրեցիներս մշտապես հպարտացել ենք Իսահակյանով ու Շիրազով, Սիեր Մկրտչյանով ու Էլի շատ ու շատ մեծերով: Սակայն ամենևին էլ պետք չէ տարվել հպարտության մոլուցքով ու մոռանալ, որ թեև ծնունդով գյումրեցի անվանի գրողները, արվեստի և մյուս գործիչները քաղաքին պատիվ են բերում, բայց լոկ նրանցով չի որոշվում քաղաքի դեմքը: Գյումրու և, առհասարակ, յուրաքանչյուր քաղաքի իրական դեմքն առաջին հերթին որոշվում է փաստացի բնակիչներով:

Հոգևոր աղետի պատճառով Գյումրիի մտավորականության խեղճացումն ու մանրացումը, բնականաբար, պիտի հանգեցներ ինչպես բնակչության, այնպես էլ քաղաքի <<հայրերի>> գորշացման ու մանրացման: Անտարակույս, սա է նաև այն պատճառներից մեկը, որ Շիրակի մարզում քաղաքացիական հասարակության կառույցները և հատկապես կուսակցությունները, թույլ են, իսկ ընտրություններում մեր ընտրողները, որպես կանոն, թեկնածուների միջև որևէ տարբերություն չեն տեսնում՝ պատճառաբանելով, թե նրանցից յուրաքանչյուրն էլ գուտ անձնական շահ է հետապնդում: Սակայն որքան էլ որ պարտադրված համաձայնվենք հոգևոր աղետի՝ որպես կայացած փաստի հետ, այդուհանդերձ ոչ մի կերպ չի կարելի արդարացնել ընտրություններում ընտրողների անտարբերությունը կամ առաջադրված թեկնածուների միջև որևէ

տարբերության իբր թե բացակայության մտայնությունը: Նախ հենց <<ընտրություն>> երևույթի հիմնական առաքելություններից մեկը քաղաքական էլիտայի ձևավորումն է: Միաժամանակ ամեն ոք, որ երկրում էլ նա ապրի, ունի անձնական շահ: Բայց կա նաև հասարակական շահ, և շատ դեպքերում այդ երկու շահերն իրար հակասում են: Զարգացած քաղաքակրթությունը լուծել է այդ կարևոր հարցը, ուր մարդու անձնական շահը և հասարակական շահը սերտորեն փոխկապակցված են, և մարդը, մի շահը հետապնդելով՝ հետապնդում է նաև մյուսը: Մա ժողովրդավարության կարևոր սկզբունքներից մեկն է, որը, ցավոք սրտի, նույնպես բացակայում է մեր հասարակությունում:

### **Հասարակական մասնակցություն**

Ակնհայտ է, որ մեր երկրում, մասնավորապես համայնքներում, գրեթե իսպառ բացակայում են <<հասարակական մասնակցություն>> երևույթը, տեղական համագործակցության ցանցերը, կոալիցիաները՝ բաղկացած համայնքների ակտիվ անձանցից և քաղաքացիական հասարակության կառույցներից: Մեր հասարակությունը դեռևս չունի հստակորեն ձևավորված պատկերացումներ և ավանդույթ իշխանությունների հետ իր հարաբերությունները կառուցելու, պետության, որպես հասարակական ինստիտուտի, հանդեպ իր վերաբերմունքը դրսևորելու, իր խնդիրների և նպատակների լուծման պահանջատերը լինելու հարցերում: Ուստիև մեծագույն խնդիր է օտարված հանրությանը մասնակցության մղելու, հատկապես տեղական ինքնակառավարման մակարդակում, համայնքի կառավարման գործին: Ավելին, երբեմն համայնքի ակտիվ անհատների կամ քաղաքացիական հասարակության կառույցների մասնակցության ցանկությունն ու փորձերը դիտարկվում են իբրև դիմադրություն իշխանությանը:

Ինչպես միջազգային բազմաթիվ կոնվենցիաներով, այնպես էլ հայաստանյան օրենսդրությամբ սահմանված են իշխանության տարբեր մակարդակներում՝ որոշումների մշակման, ընդունման, իրականացման և վերահսկման գործընթացում հանրության մասնակցության մասին դրույթներ սակայն դրանք անհասանելի են մնում հանրությանը:

Մինչդեռ ժողովրդավարության այբուբենին անգամ նվազ ծանոթ չլինելի համար գաղտնիք չէ, որ առանց կայացած ինքնակառավարվող համայնքների, համապետական մակարդակով ժողովրդավար հասարակություն պատկերացնելն անգամ հնարավոր չէ: Ուստի քաղաքացիական հասարակության կառույցներն իրենց առաջնային խնդիրներից մեկն էլ պետք է համարեն լայն զանգվածների իրազեկելը՝ համայնքի ինքնակազմակերպմանն ու կառավարմանը մասնակից լինելու մասին միջազգային կոնվենցիաներին և հայաստանյան օրենսդրությանը:



## Հայաստանյան կուսակցությունների գործունեությունը և նրանց բացթողումները

Առանց ամուր և ներկայացուցչական կուսակցությունների ձևավորման և նրանց ակտիվ գործունեության, բացառվում է ժողովրդավարական, իրավական պետական համակարգի հաստատումն ու հետագա վերընթացը: Կայացած քաղաքական կուսակցությունների գործունեությունը և ծրագրերը հիմնված են որոշակի գաղափարախոսության վրա, նրանց գործառույթներն են՝ գաղափարական ծրագրերի մշակումը, տեսակետների հավաքումը, դրանց միավորումն ու ձևակերպումը, քաղաքական կրթությունը, և, ի վերջո, մրցապայքարը՝ իշխանությունը նվաճելու կամ վերահսկելու համար: Բնականաբար, բացառություն չպետք է լինի նաև Հայաստանի պարագայում, ուր թեև կան մի շարք կուսակցություններ, որոնք ունեն հարուստ կենսագրություն և քաղաքական փորձ, այնուհանդերձ պարտավոր են վերանայել իրենց վերջին տարիների գործելաոճը՝ սրբագրումներ կատարելով սեփական ձեռագրում և ծրագրերում, նպատակ դնելով նորովի ներկայանալ հասարակությանը, գիտակցելով, որ թույլ կառուցվածքով, անդամների և համակիրների սակավությամբ, ինչպես նաև ֆինանսական ու նյութական անբավարար ռեսուրսների պայմաններում, ինչպես յուրաքանչյուր կուսակցություն, այնպես էլ իրենցը, չի կարող ունենալ անհրաժեշտ քաղաքական ազդեցություն: Այդ նպատակով, նախ և առաջ, կուսակցությունները պետք է դառնան հասարակության համար առավել համակրելի: Կառուցվածքային առումով հզորանալու համար նրանք պետք է բացեն իրենց դռները նրանց առջև, ովքեր ընդունում են իրենց գաղափարները, ծրագրերն ու գործելաոճը, հզորացնելով իրենց շարքերը, իրական հակակշիռ դառնան ինչպես գործող համապետական իշխանությանը, այնպես էլ մարզային և տեղական իշխանություններին՝ իրենց տեղական կառույցների միջոցով: Կուսակցական կառույցները տեղերում պետք է որդեգրեն ապակենտրոն գործելաոճ: Այն կուսակցությունները, որոնք ունեն հարուստ քաղաքական փորձ, պարտավոր են արագորեն արձագանքել երկրում ընթացող քաղաքական գործընթացներին և նպաստել օգուտ բերող ձեռնարկումների իրականացմանը՝ խոչընդոտելով վնասաբերները: Կուսակցությունները պետք է նաև քաղաքական անցուդարձի ակնթարթային գնահատականները տան և զարգացնեն հասարակությանը ճիշտ և արագ կողմնորոշելու ավանդույթը, ստեղծեն այնպիսի հասարակական մթնոլորտ, որի պայմաններում ցանկացած իշխանություն պարտադրված լինի մտածել և գործել ի շահ հայրենիքի և ժողովրդի: Կուսակցությունները պետք է պայքարեն հասարակությանը զանգվածաբար հիասթափեցնելու և քաղաքական դաշտի այլասերման դեմ:

**Շիրակի մարզում գործող կուսակցությունների** վիճակը ներկայումս այնքան էլ նախանձելի չէ, միայն նշենք, որ եթե մեկ-երկու տարի առաջ մեր մարզում կար շուրջ քսան կուսակցական կառույց, որոնց կեսը ունեին գրասենյակներ, ապա դրանց թիվը ներկայումս, մեր ունեցած տվյալներով, տասներեքն է: Եվ դա այն դեպքում, երբ Հայաստանում գրանցված են շուրջ 80 կուսակցություններ:

## **ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ**

Հարկ է նշել, որ քաղաքացիական հասարակության այս կարևորագույն ինստիտուտները ևս Հայաստանում սկսեցին ի հայտ գալ 1988թ-ի Արցախյան շարժման տարիներին և ապա տարածվեցին Հայաստանի Հանրապետության անկախացումից ի վեր: Նախկինում ՀԿ-ները պաշտոնական գրանցում էին ստանում տեղական մարմիններում: Երբ կարգը փոխվեց, դրանցից շատերը ժամանակի ընթացքում պարզապես լուծարվեցին և չգրանցվեցին ՀՀ Արդարադատության նախարարությունում, այնուհետև՝ ՀՀ պետական ռեգիստրում: Մակայն այս վերլուծությամբ ամեննին նպատակ չհետապնդելով կերտել ՀԿ-ների ձևավորման պատմությունը, քանզի դա առավելապես պատմաբանների խնդիրն է, մենք կփորձենք ընդհանուր գծերով գնահատել լոկ Շիրակի մարզում առկա հասարակական կազմակերպությունների դաշտը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեր ՀԿ-ների գերակշիռ մասը տեղակայված և գործում են Շիրակի մարզկենտրոն Գյումրի քաղաքում, իսկ մարզի այլ համայնքներում հատուկենտ գործող ՀԿ-ները հիմնականում <<համայնքային կենտրոններ>> բազմագործառույթ համարվող կազմակերպություններ են:

Թերևս մեր մարզի հասարակական սեկտորի ամենամեծ բացթողումը ՀԿ-ների համագործակցության ցանցային համակարգի թերզարգացածությունն է, ինչի հաղթահարումն առավել դյուրին կդարձներ ինչպես ՀԿ-ների հարաբերությունները միմյանց, այնպես էլ հասարակության հետ, այդ թվում՝ փոխադարձ աջակցության, իրար լրացնելու, փորձի ու գիտելիքների փոխանակման և միմյանցից սովորելու լավագույն հնարավորություններ կստեղծեր: Միաժամանակ ընդգրկուն ու մշտապես թարմացվող ցանցը նաև ցանկալի տեղեկատվության տարածման առավել արդյունավետ միջոց կլիներ ՀԿ-ների համար, իրազեկելով՝ կնպաստեր ջանքերի համատեղմանը ու նոր կապերի ձևավորման հնարավորությունների մեծացմանը, քանզի, որպես կանոն, հասարակական կազմակերպությունների միջև համագործակցությունը մեզանում առավելապես հիմնված է անձնական հարաբերությունների և ոչ ամեննին միանման շահեր և խնդիրներ հետապնդելու սկզբունքի վրա:

Մարզում կան ՀԿ-ներ, որոնց ղեկավարները ամենայն ազնվությամբ խոստովանում են, որ իրենց կազմակերպությունները գործում են միայն

դրամաշնորհային ծրագրեր շահելու դեպքում, իսկ եթե չեն շահում, ապա դադարեցնում են իրենց հասարակական գործունեությունը: Առանձին ՀԿ-ներ էլ իրենց ոչ հրապարակային գործունեության մեղքի մեծ բաժինը բարդում են տարաբնույթ միջոցառումներ կազմակերպող ՀԿ-ների, ինչպես նաև ՋԼՄ-ների վրա, պատճառաբանելով, որ իրենց երբեք չեն հիշում, հրավերներ չեն ուղարկում, չեն զանգում և չեն լուսաբանում իրենց գործունեությունը, մոռանալով, որ հենց այդ ամենի համար է մարդկությունը ստեղծել PR ( հասարակության հետ կապեր) գիտությունը, առանց որի ժամանակակից աշխարհում պարզապես անհնար է հասարակական գործունեություն ծավալել:

Մի նկատառում ևս. հասարակական կազմակերպություններն առավելապես տրամադրված են հաշվետու լինել դոնորների առջև, քան հասարակության: Դա, թերևս, նրանից է, որ ՀԿ-ները հասարակությունից գրեթե ոչ մի բանով կախված չեն: Անշուշտ, կարելի է մեկ-երկու խոսք էլ հղել միջազգային դոնոր կազմակերպություններին, որոնք դրամաշնորհներ տրամադրելիս կարծես հաշվի չեն առնում, թե տվյալ կազմակերպությունն արդյո՞ք ի վիճակի է հասարակական մասնակցություն ապահովել կամ իրապես պաշտպանել հասարակության այս կամ այն խմբի շահերը: Եվ պատահական չէ, որ մեր տեղեկատուի <<լուծարման ենթակա>> կազմակերպությունների ցանկում կարելի է հանդիպել այնպիսի կազմակերպությունների, որոնք ստացել են տասնյակ դրամաշնորհներ: Մի շարք ՀԿ-ներ էլ, որոնք դոնոր կազմակերպությունների <<աչքի լույսն են>> և պարբերաբար ստանում են դրամաշնորհներ, երբեք չեն երևում ՋԼՄ-ներում: Անհասկանալի է մնում այն հանգամանքը, թե, ի վերջո, ու՞մ հետ և ու՞մ համար են արվում այդ ծրագրերը: Իհարկե, նման ՀԿ-ները կարող են պատճառաբանել, թե իրենք մասնագիտացված կազմակերպություններ են և ունեն որոշակի թիրախ լսարաններ: Այդ դեպքում խորհուրդ կտաինք նրանց, որպեսզի վերածվեն ՄՊԸ-ների և զբաղվեն որոշակի վճարովի ծառայություններ մատուցելով: Մենք համոզված ենք, որ հասարակական կազմակերպությունները պետք է աշխատեն հասարակության հետ և նպաստեն հասարակական մասնակցության զարգացմանը:

Շիրակի մարզում գործող ՀԿ-ների դաշտի ուսումնասիրություններից ակնհայտ է դառնում, որ զուտ բարեգործություններով զբաղվող ՀԿ-ների քանակը, ի տարբերություն հետերկրաշարժյան տարիների, այնքան էլ մեծ չէ: Փոխարենը այլ ոլորտի ՀԿ-ները, հարմար առիթի դեպքում, ամենայն սիրով են զբաղվում հումանիտար օգնություն բաժանելով, իսկ ասիա տեղեկատվություն տրամադրելու առումով առավել զուսպ էին բարեգործականները, նրանք հավանաբար չեն սիրում հրապարակայնացնել իրենց գործունեությունը:

Մի քանի խոսք բարեգործական ոլորտի այն հասարակական կազմակերպությունների մասին, որոնց անվանումները ևս կան <<լուծարման փուլում>> գտնվող հասարակական կազմակերպությունների ցանկում: Դրանցից շատերը, տարիներ առաջ, երբ հումանիտար օգնություն էր գալիս

արտերկրից, բավականին ակտիվ գործունեություն էին ծավալում օգնությունների բաշխման գործում: Սակայն, արտերկրից օգնությունների ստացման նվազմանը զուգընթաց, այդ կազմակերպությունները կամ դադարեցրեցին իրենց գործունեությունը, կամ ամբողջովին լուծարվեցին: Թեև այստեղ պետք է նշեն, որ լուծարման փուլում գտնվող որոշ ՀԿ-ներ դեռ երկար ժամանակ կպահպան են այդ <<կարգավիճակը>>, այսինքն ձեռնպահ կմնան կազմակերպությունը ամբողջովին լուծարելուց, որպեսզի հումանիտար օգնության պատեհ առիթի դեպքում կրկին <<ակտիվանան>>:

Գյուղատնտեսական ոլորտի ՀԿ-ները ևս շատ չեն Շիրակի մարզում: Դրանք հիմնականում գրանցվել են 2003թ-ին և շուրջ 10-ն են: Սակայն մեկ-երկուսն են ակտիվ գործունեություն ծավալում: Մյուսներից շատերի ղեկավարները գյուղատնտեսության բնագավառում գերադասում են զբաղվել իրենց ՄՊԸ-ներով: Այս ոլորտի ՀԿ-ներն այժմ են ընկնում բավականին հնչեղ անվանումներով, բայց ոչ համապատասխան գործունեությամբ, իսկ դրանց միաժամանակյա հիմնումը, հավանաբար, ունեցել է լուրջ շարժառիթ...

ՀԿ-ների գրասենյակային ապահովվածության ու անհրաժեշտ պայմանների մասին գրելը անիմաստ ենք համարում, քանզի ընդամենը մեկ տասնյակ ՀԿ-ներ են հիմնավորապես լուծել այդ հարցը: Կան շատ ՀԿ-ներ, որոնք գրասենյակային պայմաններով ապահովվում են լոկ դրամաշնորհային ծրագրեր շահելու դեպքում: Որոշ ՀԿ-ների ղեկավարներ էլ, որպես գրասենյակի առկայություն, նշում են իրենց բնակարանները կամ, եթե պաշտոնյաներ են, իրենց աշխատասենյակները: Սակայն ակնհայտ է, որ ՀԿ-ների կայացման գործում աշխատանքային պայմանների բացակայությունը ազդեցիկ խոչընդոտներից մեկն է:

ՀԿ սեկտորի թուլություններից է նաև նրանց գերակշիռ մասի (շուրջ 90%) մարզկենտրոնում կենտրոնացումը: Կարծում ենք, անհրաժեշտ է լուրջ միջոցառումներ իրականացնել, որպեսզի ՀԿ զարգացումը այսուհետ ձեռք բերի առավելապես համայնքային ուղղվածություն:

Շիրակի մարզում գործող ՀԿ-ները եթե դիտարկելու լինենք ըստ իրենց գործունեության ոլորտների, ապա ակնհայտ է դառնում, որ կան հասարակության բազմաթիվ կարևորագույն բնագավառներ, որոնց հանդեպ որևէ հասարակական կազմակերպություն հետաքրքրություն չի ցուցաբերում: ՀԿ սեկտորի ուսումնասիրություններից կարելի է և հանգել այն եզրակացությանը, որ, որպես կանոն, նրանք կարծես գերադասում են նպատակ-խնդիր չդրածնեվ վտանգավորության մեծ աստիճան պարունակող ոլորտները, ասենք, թեկուզ, կոռուպցիայի, թրաֆիկինգի, բնապահպանական, քաղաքաշինության, ապառողների շահերի, ազգային փոքրամասնությունների, ընտրակեղծիքների, քրեական իրավիճակի, թմրամոլության, մարմնավաճառության, անչափահասներին շահագործելու և այլք: Ըստ էության, մեր մարզում ՀԿ-ները ամբողջովին չեն բավարարում ու չեն արտահայտում հասարակական պահանջարկն ու պատվերը:

Իհարկե, Շիրակի մարզում կան կայացած ՀԿ-ներ, սակայն կան նաև

այնպիսիք, որոնց գործունեությանը հետևելով, ակամա տրամաբանական ես համարում այն կարծիքը, թե «ՀԿ-ներից շատերը իրավիճակի անճարակությունից ծնված կառույցներ են և ստեղծվել են զուտ այն պատճառով, որ այլ գործ պարզապես չկա անելու»:

### **ՀԿ 2006թ. և 2009թ. Տեղեկատուներ. համեմատական վերլուծություն**

Առաջին փոփոխությունը, որն աչքի է զարնում, ինթերնետային կապի միջոցով հարաբերությունների զարգացումն է: Նախորդ անգամ ( 2006 թ.) շուրջ 150 հասարակական կազմակերպություններից էլեկտրոնային փոստի միջոցով մենք կարողացանք տեղեկատվություն ստանալ միայն 3, այս անգամ՝ ավելի քան 30 կազմակերպություններից: Սա, բնականաբար, ողջունելի լինելուց գատ, խոսուն վկայությունն է այն բանի, որ քաղաքացիական հասարակության կառույցները հիմնադրվել են ինթերնետային կապի օգտագործման բնագավառում, դարձել ավելի մատչելի ու հաղորդակցային: Վերադառնալով այս տեղեկատուի պատրաստման գործընթացին, նշենք, որ մեր ձեռքի տակ ենք ունեցել ՀՀ ՊԵՏ. Ռեզիստորում գրանցված կազմակերպությունների ցուցակը, որտեղ գրանցված հասարակական կազմակերպությունների, հիմնադիրների կամ ղեկավարների շատ տվյալներ, այդ թվում նաև հեռախոսահամարների գրեթե 70 տոկոսը, փոփոխված էին: Տասնյակ ՀԿ-ների ներկայացուցիչներ էլ մեր զանգերից զարմանում էին, հարցնելով, թե մեզ որտեղից է հայտնի դարձել, որ իրենց անունով կազմակերպություններ կան գրանցված: Բազմաթիվ էին այն կազմակերպությունները, որոնց ղեկավարները վաղուց Հայաստանից հեռացել էին՝ մոռանալով լուծարել կազմակերպությունը կամ ղեկավարումը հանձնել մեկ ուրիշին: Հանդիպեցին մի շարք ՀԿ-ներ էլ, որոնց ղեկավարները մահացել էին, և կազմակերպությունները մնացել էին, այսպես ասած, «օդից կախված» վիճակում: Այս ամենը խոսում է այն մասին, որ որոշ հասարակական կազմակերպություններ «մեկ մարդու» կազմակերպություն են, և երբ այդ մարդը որոշում է այլևս չգրադվել հասարակական գործունեությամբ, դրանք պարապտրոդի են ենթարկվում կամ փակվում են:

Այս տեղեկատուն ստեղծելիս մենք հաշվի առանք նաև մեր նախորդ փորձը և կառուցվածքի մեջ որոշակի փոփոխություններ կատարեցինք, մասնավորապես շատ հասարակական կազմակերպությունների անվանումների առաջին բառերը, որոնք էին՝ «Գյումրու...» կամ «Շիրակի...» չնշեցինք, որպեսզի ընթերցողները ցանկից առավել դյուրին գտնեն իրենց հետաքրքրող կազմակերպությունը: Միաժամանակ կազմակերպությունները բաժանեցինք ըստ ոլորտների, որը, պիտի խոստովանենք, այնքան էլ հեշտ աշխատանք չէր, քանզի շատ կազմակերպություններ գերադասել են նպատակ-խնդիր դարձնել

միաժամանակ մի քանի ոլորտներ և բավականին դժվար էր որոշել, թե այս կամ այն կազմակերպության հիմնական ոլորտը ո՞րն է: Այդուհանդերձ, մենք պետք է որևէ ոլորտի վրա կանգ առնեինք՝ նախ և առաջ տեղեկատուից օգտվողների գործը հեշտացնելու համար: Ուստի ՀԿ-ներին ըստ ոլորտների բաժանելիս, հաշվի ենք առել ոչ միայն կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից նշվածը, այլ նաև կողմնորոշվել ենք ըստ իրենց կատարած աշխատանքների և գործունեության ձևերի: Այնպես որ, եթե որոշ կազմակերպություններ համաձայն չեն լինի մեր կողմից կատարված բաժանումների հետ, հայցում ենք նրանց ներողամտությունը, նշելով, որ տարբերակումը կարելի է համարել զուտ պայմանական: Եվ եթե կես լուրջ, կես կատակ մոտենալու լինենք այս ամենին, պիտի նշենք, որ մեր բաժանումով բազմաթիվ հասարակական կազմակերպությունների էլ օգնել ենք՝ վերջապես կողմնորոշվելու, թե իրենցը որ ոլորտին է պատկանում ...

Շիրակի մարզում գրանցված տասնյակ ՀԿ-ների հիմնադիրներ, ի դեպ, որոնցից շատերին էլ հայտնաբերելը մի իսկական գլուխկոտրուկ էր, նշեցին, որ իրենք մտադիր են լուծարել իրենց կազմակերպությունները, ուստի տեղեկատուում նպատակահարմար չհամարեցին իրենց կազմակերպության մասին հիշատակելը: Այնուամենայնիվ, մենք որոշեցինք նման կազմակերպություններին ընդգրկել << լուծարման փուլում գտնվող կազմակերպություններ >> ցանքում: Ավելացնենք, որ այդ ցանկում կան կազմակերպություններ, որոնց ղեկավարները մեզ այդպիսի պատասխան էին տվել դեռևս 2006 թվականին, նմանատիպ տեղեկատուի պատրաստման ժամանակ: Իհարկե, չենք ուզում անմեղության կանխավարկածը խախտած լինել, բայց, այնուամենայնիվ, արժե ևս մեկ անգամ հիշատակել, որ ոմանք իրենց կազմակերպությունները պահել են զուտ ձևական, այսպես կոչված, <<սև օրվա>> համար, հումանիտար օգնությունների ստացման հարմար առիթը օգտագործելու, կամ նմանատիպ այլ նպատակներով:

## ՈՐՊԵՏ ՎԵՐՋԱԲԱՆ

Հասարակական կազմակերպություններից շատերի ամենամեծ բացթողումն էլ այն է, որ շատ դեպքերում նրանք որդեգրում են հարմարվողականությունը քաղաքական զարգացումներին և չեն փորձում ներագդել այդ զարգացումների վրա: Մեր ձեռքի տակ ունենալով Շիրակի մարզում գործող քաղաքացիական հասարակության կառույցների ամենահարուստ և գրեթե ամբողջական տեղեկատվությունը, ինչպես նաև հաշվի առնելով ծրագիրը իրականացնելիս ձեռք բերված փորձն ու գիտելիքները, ուզում ենք մեզ թույլ տալ և մի քանի խորհուրդներ հղել հասարակական կազմակերպություններ ստեղծել ցանկացող նախաձեռնող խմբերին. այդպիսիք ստեղծելիս պետք է հաշվի առնվի թիմային աշխատանք կատարելու հիմնությունների առկայությունը, որպեսզի նվազագույնի հասցվի կախվածությունը առաջնորդներից: Ներքին

դեմոկրատիան պետք է բարձր գնահատի նաև կազմակերպության ղեկավարը: Նրա՝ հասարակական կյանքում փորձ և ճանաչողականություն ունենալու հանգամանքը ևս կարևոր է, որպեսզի կազմակերպությունը ունենա երկարատև կյանք և գործունեությունը չսահմանափակի լոկ պետական գրանցում ստանալով:

### **Ժամանակավորապես գործունեությունը դադարեցրած կազմակերպություններ**

1. <<Ամասիա>> ՀԿ  
Հասցե. գ. Ամասիա  
Կոնտակտային անձ. Արկադի Հովհաննիսյան
2. <<Բաքու>> սոցիալական ՀԿ  
Հասցե. Գյումրի, Ղուկասյան 17  
Կոնտակտային անձ. Արթուր Մելքոնյան
3. <<Շռանկյունի>> երիտասարդ մարդկանց քրիստոնեական ընկերակցութ. ՀԿ  
Հասցե. Գյումրի, Գորկու 86  
Հեռախոս. +(374 312) 3-61-41, 3-33-51  
Կոնտակտային անձ Տիգրան Մախլյան
4. <<Հունական >> մշակութային միություն ՀԿ  
Հասցե. Գյումրի, Սևյան 68  
Կոնտակտային անձ. Ալեքսան Պետրով
5. <<Նոր Գյումրի>> բարեգործական հիմնադրամ ՀԿ  
Հասցե. Գյումրի, Շիրակացի 68  
Կոնտակտային անձ. Ստեփան Գրիգորյան

### **Կազմակերպություններ, որոնց գործունեության մասին մեզ չհաջողվեց տեղեկատվություն հայթայթել**

1. <<Այծեղջուր>> հասարակության զարգացմանն աջակցող>> ՀԿ  
Կոնտակտային անձ. Անահիտ Բարսեղյան
2. <<Բարեփոխումների աջակցման ասոցիացիա>> ՀԿ  
Կոնտակտային անձ. Հովհաննես Կարապետյան
3. <<Գյումրու Շիրակ բարեգործական>> հիմնադրամ  
Կոնտակտային անձ. Մխիթար Պապիկյան
4. <<Երազանք>> ՀԿ  
Կոնտակտային անձ. Էդիտա Հովսեփյան
5. Երիտասարդ Շիրակացի>> ՀԿ  
Կոնտակտային անձ. Անուշ Մանվելյան
6. <<Կվինտետ>> բարեգործական ՀԿ  
Կոնտակտային անձ. Լիանա Դարբինյան

7. <<Հայ Ավստրիական բարեգործական կենտրոն>> ՀԿ  
Կոնտակտային անձ. Աշոտ Կուրդինյան
8. <<Հայ-Իտալական ժողովուրդների բարեկամություն>> ՀԿ  
Կոնտակտային անձ. Հովհաննես Հարությունյան
9. <<Հաստատուն ուղի>> կրթական ՀԿ  
Կոնտակտային անձ. Արտյոմ Մարտիրոսյան
10. <<Միլլատ>> ազգային փոքրամասնությունների միություն>>  
բարեգործական ՀԿ  
Կոնտակտային անձ. Մաջիտ Ուսոյան
11. <<Մոսկովսկիյե պատրարիատ>> ՀԿ  
Կոնտակտային անձ. Իրինա Աբաջյան
12. <<Մուղղուսի հարություն >> բարեգործական ՀԿ  
Կոնտակտային անձ. Հարություն Հարությունյան
13. <<Ներդաշնակություն>> զենդեբային զարգացման>> ՀԿ  
Կոնտակտային անձ. Հեղնար Ամիրյան
14. <<Նշույլ>> մանկապատանեկան, սոցիալ-դաստիարակչական ՀԿ  
Կոնտակտային անձ. Զարեհ-Խաջեր Յահնյան
15. <<Նոր ճանապարհ >> երիտասարդական ՀԿ  
Կոնտակտային անձ. Ժանետա Մինասյան
16. <<Շիրակի մարզի բարեփոխումների և զարգացման իրավապաշտ.>> ՀԿ  
Կոնտակտային անձ. Յուլյա Ղազարյան
17. <<Ոլորտ>> ակումբ ՀԿ  
Կոնտակտային անձ. Գագիկ Պետրոսյան
18. <<Ռեսուրս կենտրոն XXI դար>> ՀԿ  
Կոնտակտային անձ. Նարինե Սահակյան
19. << Ռոսիա>> բարեգործական ընկերություն ՀԿ  
Կոնտակտային անձ. Իրինա Աբաջյան
20. Սպառողների իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ  
Կոնտակտային անձ. Էդուարդ Մկրտչյան
21. <<Վահագն>> բարեգործական հիմնադրամ  
Կոնտակտային անձ. Արթուր Պետրոսյան
22. <<Վարպետաց քաղաք>> տուրիզմի աջակցության ՀԿ  
Կոնտակտային անձ. Զոնիկ Թոսունյան
23. <<Քաղաքացիական հասարակության միջազգային ինստիտուտ>> ՀԿ  
Կոնտակտային անձ. Արտյոմ Խաչատրյան
24. <<Օսկան>> բարեգործական ՀԿ  
Կոնտակտային անձ. Քրիստինա Փափանյան

**Լուծարման փուլում գտնվող կազմակերպություններ**

1. <<Առողջ ապրելակերպ – առողջ սերունդ>> բարեգ. ՀԿ



2. <<Արշալույս>> հաշմանդամ կանանց միություն ՀԿ
3. <<Բարերար>> բարեգործական ՀԿ
4. <<Բարի փերի>> բարեգործական ՀԿ
6. <<Գյումրու գործարար մարդիկ>> ՀԿ
7. <<Գյումրու թիվ 26 դպրոցի շիանարարական կազմակերպություն >> ՀԿ
8. <<Գյումրու հաշմանդամ որբերի տուն>> հիմնադրամ
9. <<Գյումրու <<Հուսո Մեկնարկ>> համայնքային կենտրոն>> ՀԿ
10. <<Դիաբետիկների աջակցություն>> ՀԿ
12. <<Եվրոպական ուսանողական ֆորումի >>Գյումրու մասնաճյուղ
13. <<Երիտասարդությունը հանուն խաղաղության և զարգացման>> ՀԿ
14. <<Զարկերակ >> տեղեկատու վերլուծական կենտրոն ՀԿ
15. << Հայկական ինտերհելպ >> բարեգործական կենտրոն ՀԿ
16. <<Հասմիկ>> մանկական ստեղծ. կենտրոն ՀԿ
17. ՀՀ Շիրակի մարզի մշակութային զարգացման հիմնադրամ
18. << Հույս>> բարեգործական հիմնադրամ ՀԿ
20. <<Մանկավարժներ առանց սահմանի>> ՀԿ
21. <<Մարդու համակողմանի զարգացման կենտրոն >> ՀԿ
23. <<Շիրակի մարզի գրողների ընկերակցություն>> ՀԿ
24. <<Սոցիալական ինժեներիայի կենտրոն >> ՀԿ
25. <<Քաղաքացիական հասարակություն Հայոց աշխարհում>> ՀԿ

**ԹՎԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Կոնտակտային անձերից	Կիև	Տղամարդ
ա/ ՀԿ-ներ - 215	95	120
բ/ Հիմնադրամներ - 13	6	7
գ/ Կուսակցություններ - 13	2	11

**2. Էլեկտրոնային հասցեների առկայություն**

	ունեն
ա/ ՀԿ-ներ - 216	140
բ/ Հիմնադրամներ -13	12
գ/ Կուսակցություններ -13	5

Թվային վերլուծությունների մեջ չենք ներառել ժամանակավորապես իրենց գործունեությունը դադարեցրած ՀԿ-ներին –6, լուծարման փուլում գտնվող ՀԿ-ներին–25, ինչպես նաև այն ՀԿ-ներին, որոնցից տվյալներ մեզ չհաջողվեց ձեռք բերել:

## **ՀԿ-ներն ըստ ոլորտների**

- Քաղաքացիական հասարակություն և բազմագործառույթ - **27**  
Իրավապաշտպան, լրագրողական,  
փախստականների շահերի պաշտպանության - **18**  
Կրթա-մշակութային - **52**  
Մոցիալ-հոգեբանական, առողջապահական և բարեգործական - **58**  
Համայնքային կենտրոններ - **9**  
Բնապահպանական, գյուղատնտեսական և տնտեսագիտական - **14**  
Դպրոցական ծնողխորհուրդներ - **18**  
Մարզական և սպորտային ֆեդերացիաներ - **19**

## **ՀԿ-ների քանակը ըստ գրանցման տարիների**

Մինչև 1996 թ. – 5	2003 թ. – 24
1996 թ. – 6	2004 թ. – 24
1997 թ. – 7	2005 թ. – 36
1998 թ. – 6	2006 թ. – 9
1999 թ. – 9	2007 թ. – 9
2000թ. – 8	2008 թ. – 4
2001 թ. – 18	2009 թ. – 1
2002 թ. – 17	

**<<Շիրակ կենտրոնի>> վերլուծությունների  
և հետազոտությունների բաժին:**

# I Եկեղեցիներ, կրոնական այլ կազմակերպություններ

1

## **Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմ**

**Հասցե.** Գյումրի, Ռիժկովի 6

**Հեռախոս.** + (374 312) 5-37-77

**Ֆաքս.** + (374 312) 5-25-11

**Էլ. Փոստ.** secuetazy@shte.am

**Շիրակի թեմի առաջնորդ.** Միքայել եպիսկոպոս Աջապահյան  
**Պատմական ակնարկ.** << Շիրակի թեմն ստեղծվեց Գևորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսի սրբատառ կոնդակով, 1920 թ. սեպտեմբերին՝ առաջին հանրապետության ժամանակ: Ընդգրկում էր այսօրվա Շիրակի, Լոռու, Տաուշի մարզերը, Արագածոտնի մարզի Թալինի և Ծաղկահովիտի նախկին վարչական շրջանները: Նույն կոնդակով առաջին առաջնորդ նշանակվեց առաջնորդական փոխանորդ Ս. Արտակ վրդ. Սմբատյանը: Մինչ այդ այն Երևանի թեմի մաս էր կազմում՝ որպես Ալեքսանդրապոլի փոխանորդություն: Ցավոք առաջին հանրապետության անկումից հետո, ինչպես ընդհանրապես Հայ Առաքելական Եկեղեցու, այնպես և Շիրակի թեմի համար, սկսվեցին ծանր ժամանակներ: Մեկը մյուսին փոխարինեցին առաջնորդական փոխանորդներն ու առաջնորդները, ովքեր, քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով, անկարող էին որևէ գործունեություն ծավալել թեմի տարածքում՝ հոգուտ բարեպաշտ հավատավորի: Մեկը մյուսին փոխարինեցին տասնյոթ հոգեվոր հովիվներ. նրանցից միայն Ս. Նարեկ եպս. Շաքարյանն ամենաերկարը հովվեց թեմը և արդյունաշատ հոգեվոր գործունեություն ծավալեց՝ քաջալերելով երիտասարդների մուտքը հոգեվոր ասպարեզ, պայծառեցնելով գործող եկեղեցիները: Հրաժարական տվեց 1990 թ. տասնինամյա առաջնորդական գործունեությունից հետո:

1990 թ., Գարեգին Բ Կաթողիկոսի ընտրությունից անմիջապես հետո, առաջնորդական տեղապահ նշանակվեց Միքայել Ծ. Վրդ. Աջապահյանը, ով 2001 թ. ձեռնադրվեց եպիսկոպոս և հաստատվեց որպես Շիրակի թեմի առաջնորդ>>:

## **Հայ Ավետարանական-Մկրտական եկեղեցի**

**Հասցե.** Գյումրի, Ռ. Մելիքյան 16

**Հեռախոս.** +(374 312) 4-16-51, +(374 312) 5-29-97

**Էլ. Փոստ.** roubik@yandex.ru

**Առաջնորդ.** Հովիվ Վեր. Ռուբիկ Փահլևանյան

**Պատմական ակնարկ.** << ...XX դարի սկզբին արդեն կազմավորված ավետարանական եկեղեցիներ են գործել Ալեքսանդրապոլում, ներկայիս Մարմաշեն, Սպանդարյան, Մեծ Մանթաշ և այլ գյուղերում: 1923-45 թթ. մեծ հալածանքների` աքսորի ու կալանքի սպառնալիքի տակ թուլանում, սակայն գաղտնի պայմաններում շարունակում է գործել Լենինականի ավետարանական-մկրտական համայնքը: Այստեղ ծառայել են վերապատվելիներ Բզնունին, Լևոնյանը, Ենոսյանը, մելիք-Աղամյանը և այլ նվիրալիցներ: 1947-ին մի քանի հայրենադարձ ավետարանականներ միանալով գործող փոքր խմբին, աշխուժացնում են գործը: 1965-ին ՄՍՀՄ կառավարության կողմից պաշտոնապես ճանաչվում է Լենինականի Հայ ավետարանական-մկրտական եկեղեցին և համայնքի անդամների նվիրատվություններով գնվում է ժողովարան և ձեռնադրվում է հովիվ` Վեր. Գրիգոր Մալքոբյան: Այսօր Շիրակի մարզի Հայ Ավետարանական-մկրտական եկեղեցին ունի 500-ից ավելի անդամներ: Մարզի տարբեր քաղաքներում և գյուղերում ունի ժողովարաններ >>:

### **Հայ Կաթողիկե եկեղեցի**

**Հասցե.** Գյումրի, Աթարբեկյան 82

**Հեռախոս.** +(374 312) 5-21-15, +(374 312) 5-18-39

**Ֆաքս.** + (374 312) 5-69-59

**Էլ. Փոստ.** armorda@web.am

**Առաջնորդ.** Հայր Նշան Կարաքեհեան, Արքեպիսկոպոս Ադանայի Հայոց, Առաջնորդ Կաթողիկե Հայոց Հայաստանի, Վրաստանի և Արևելեան Եվրոպայի:

**Պատմական ակնարկ.** <<Ներկա Հայ կաթողիկե համայնքները կապված են հատկապես անցյալ դարի առաջին քառորդի ժամանակ տեղի ունեցած գաղթերին. Կարին-Էրզրումից, Ալաշկերտից, Մուշից և այլն... Հայ կաթողիկե այդ գյուղերի ու գավառների համար, 19-րդ դարի կեսերից, Հռոմի Ս. Աթոռը ստեղծել է եկեղեցական կազմակերպություն: Իսկ 1909 թ. Առաքելական Կառավարիչ նշանակել՝ ամբողջ կովկասի համար, Գրպծ. Տեր Սարգիս Վրդ. Տեր-Աբրահամյանին (Ալեքսանդրապոլցի, ծն. 1868 թ., վիճ. Հռոմում 1952 թ.), որը մինչև սովետական Կարգերի հաստատումը պաշտոնավարել է անխափան, իր աթոռն ունենալով Թիֆլիսում: 1992թ.-ին Հայ կաթողիկե համայնքը պաշտոնապես գրանցվում է Հայաստանում: Գյումրիում՝ 1993թ.-ից հաստատված է առաջնորդարանը: Այժմ Հայ կաթողիկե համայնքներ կան Վրաստանում՝ 20, Հայաստանում՝ 30, ընդամենը շուրջ 200 հազար հայ կաթողիկե հավատացյալներով>>:

### **<<Հավատք և կյանք բարեկարգյալ առաքելություն>>**

#### **կազմակերպություն**

**Հասցե.** Գյումրի, Մ. Խորենացու 32

**Հեռախոս.** +(374 312) 3-15-11

**Կոնտակտային անձ.** Արթուր Մինասյան

---

**<<Շիրակի մարզի Ավետարանի հավատքի քրիստոնյաների կրոնական>> կազմակերպություն**

**Հասցե.** Գյումրի, Ֆրունզե 2

**Հեռախոս.** +(374 312) 3-79-69

**Կոնտակտային անձ.** Գրիշա Դարմանյան

**Գրանցման տարին.** 1999թ.

**Գործունեության աշխարհագրությունը.** Շիրակի մարզ

**Համագործակցության**

**կամ մասնակցության ցանցեր.** Հայ Ավետարանական եկեղեցի, Հայ Ավետարանական Մկրտական եկեղեցի, <<Գետոն>> միջազգային քրիստոնեական կազմակերպություն:

**Գործունեության ոլորտը.** Կրոնական:

**Գործունեության ձևերը.** Հոգևոր դաստիարակություն, ուսուցում, դասընթացներ:

## II Քաղաքացիական կրթության և բազմագործառույթ շահ-ներ

1

**<<Ախուրյանի երիտասարդական գործունեության ակումբ>> շահ**

**Հասցե.** գ. Ախուրյան, թիվ 1 դպրոց

**Հեռախոս.** +(374 94) 71-75-78, +(374 93) 85-83-07

**Էլ.փոստ.** akharev@mail.ru

**Կոնտակտային անձ.** Արթուր Նաչարյան, Արևիկ Դարբինյան

**Հիմնադրման տարին.** 2006թ.

**Անդամների քանակը.** 25

**Կամավորների քանակը.** 25

**Աշխատակազմի քանակը.** 5

**Գործունեության աշխարհագրությունը.** Ախուրյան համայնք

**Համագործակցության**

**կամ մասնակցության ցանցեր.** <<Կրթության զարգացման ակադեմիա>>,

<<Համայնքների զարգացում>> ՄԿ:

**Գործունեության ոլորտը.** Երիտասարդական:

**Գործունեության ձևերը.** Երիտասարդների քաղաքացիական ակտիվության

բարձրացմանը նպաստում, քննարկումներ, բանավեճեր, բարեգործություն:

**Կատարած միջոցառումները.** Բարեգործական ակցիա. <<Այցելություն Հույս

մանկատուն>>, երեք օր <<ԱԵԳԱ-ում>> ուսուցողական ծրագրի իրականացում:

---

**<<Ամասիայի քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն>> ՀԿ**

**Հասցե.** գ. Ամասիա, մարզադպրոցի շենք

**Հեռախոս.** +(374 93) 74-19-36

**Կոնտակտային անձ.** Մերի Մելիքյան

**Հիմնադրման տարին.** 2003թ.

**Գրանցման տարին.** 2006թ.

**Անդամների քանակը.** 5

**Կամավորների քանակը.** 5

**Աշխատակազմի քանակը.** 5

**Գործունեության աշխարհագրությունը.** Ամասիայի տարածաշրջան:

**Համագործակցության**

**կամ մասնակցության ցանցեր.** <<Կարիտաս>>, <<Հույսի կամար>>:

**Գործունեության ոլորտը.** Բազմագործառույթ:

**Գործունեության ձևերը.** Քաղաքացիական հասարակության և համայնքների զարգացման աջակցություն, դասընթացներ, ծերերի խնամք:

**Կատարած միջոցառումները.** 3-5 տարեկան երեխաների ուսուցողական կենտրոնի հիմնում, ազգային տոների նշում:



**<<Առաջնորդություն>> քաղաքացիական հասարակության  
զարգացման կենտրոն>> ՀԿ**

**Հասցե.** Գյումրի, Տրդատ Ճարտարապետի 12/8ա

**Հեռախոս.** +(374 93) 23-79-58, +(374 77) 77-56-58

**Էլ.փոստ.** ruzan\_b@mail.ru

**Կոնտակտային անձ.** Ռուզաննա Բաղդասարյան

**Հիմնադրման տարին.** 2002թ.

**Գրանցման տարին.** 2003թ.

**Անդամների քանակը.** 152

**Կամավորների քանակը.** 83

**Աշխատակազմի քանակը.** 5

**Գործունեության աշխարհագրությունը.** ՀՀ

**Համագործակցության**

**կամ մասնակցության ցանցեր.** <<ՀԿ-բիզնես երկխոսություն>>, <<Շրջակա միջավայրի պաշտպանություն>>:

**Գործունեության ոլորտը.** Քաղաքացիական հասարակության զարգացում, կանանց իրավունքների պաշտպանություն:

**Գործունեության ձևերը.** Շահերի պաշտպանություն, սեմինարներ, խորհրդատվություն, ակցիաներ, փառատոններ, համայնքի համատիրություններին աջակցություն, երիտասարդների և միջին տարիքի մարդկանց շահերի պաշտպանություն:

**Կատարած միջոցառումները.** <<Ճանապարհ դեպի կյանք>>, Անի թաղ. ստեղծագործող հաշմանդամների ինքնահաստատմանը նպաստող ծրագիր, Շերամ համայնքի զարգացման <<Վերածնունդ>> ծրագրի մշակում:

---

**<<Գյումրի Անի>> ՀԿ**

**Հասցե.** Գյումրի, Պ.Սևակի 1

**Հեռախոս.** +(374 312) 5-90-80, +(374 93) 50-04-79

**Էլ.փոստ.** aksanamuna@mail.ru

**Կոնտակտային անձ.** Անահիտ Ղարիբյան

**Հիմնադրման տարին.** 2000թ.

**Գրանցման տարին.** 2008թ.

**Անդամների քանակը.** 83

**Կամավորների քանակը.** 17

**Աշխատակազմի քանակը.** 3

**Գործունեության աշխարհագրությունը.** Շիրակի մարզ

**Համագործակցության**

**կամ մասնակցության ցանցեր.** <<Խաղաղ Հայաստան>> կոալիցիա:

**Գործունեության ոլորտը.** Բազմագործառույթ:

**Գործունեության ձևերը.** Համայնքների զարգացման, բարեկարգման, մշակութային կյանքի աշխուժացման, քաղաքացիական հասարակության ձևավորման ծրագրերի մշակում, շահերի պաշտպանություն, ուսուցում, ժամանցի կազմակերպում, մարզական ակումբների ստեղծում:

**Կատարած միջոցառումները.** Գյումրու մինիֆուտբոլային ակումբի ստեղծում, Անի թաղամասի ժողովրդագրական բազայի ստեղծում և քարտեզագրում, Հայոց եկեղեցու պատմությանը նվիրված ինտելեկտուալ խաղ-մրցույթների անցկացում, Անի թաղամասի անձրևաջրերի հեռացման դիտահորերի մաքրում, <<Երիտասարդություն-մշակույթ>> ծրագրեր:

**<<Գյումրու Առաջընթաց>> քաղաքացիական հասարակության  
զարգացման կենտրոն>> ՀԿ**

**Հասցե.** Գյումրի, Վ. Աճեմյան փող. Տուն 7

**Հեռախոս.** +(374 77) 08-81-28, +(374 91) 69-16-90

**Էլ.փոստ.** progressgyumri@mail.ru

**Կոնտակտային անձ.** Հասմիկ Մխիթարյան

**Հիմնադրման տարին.** 2008թ.

**Գրանցման տարին.** 2008թ.

**Անդամների քանակը.** 7

**Կամավորների քանակը.** 20

**Աշխատակազմի քանակը.** 4

**Գործունեության աշխարհագրությունը.** ՀՀ

**Գործունեության ոլորտը.** Քաղաքացիական հասարակություն:

**Գործունեության ձևերը.** Տեղեկատվական, ուսուցողական:

**Կատարած միջոցառումները.** Ուսանող-լրագրողների միջոցով հարցումների անցկացում <<Երիտասարդի դերը համայնքի զարգացման գործընթացներում>>, <<Երիտասարդի դերը հակակոռուպցիոն գործընթացներում>>, <<Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքը>> սեմինար – քննարկումներ:

**<<Գյումրու Զարգացման Կենտրոն>> ՀԿ**

**Հասցե.** Գյումրի, Այվազովսկու 10

**Հեռախոս.** +(374 312) 5-23-39, +(374 93) 42-48-76

**Էլ.փոստ.** wlgyumri@mail.ru

**Կոնտակտային անձ.** Աիդա Խաչատրյան

**Հիմնադրման տարին.** 2005թ.

**Գրանցման տարին.** 2005թ.

**<<Գյումրու Զարգացման հիմնադրամ>> ՀԿ**

**Հասցե.** Գյումրի, Գայի փող. 12

**Հեռախոս.** +(374 91) 40-85-81

**Էլ.փոստ.** gdf@web.am

**Կոնտակտային անձ.** Արտուշ Մկրտչյան

**Հիմնադրման տարին.** 1999թ.

**Գրանցման տարին.** 1999թ.

**Անդամների քանակը.** 50

**Կամավորների քանակը.** 10

**Աշխատակազմի քանակը.** 7

**Գործունեության աշխարհագրությունը.** Հյուսիսային Հայաստան  
Համագործակցության

**կամ մասնակցության ցանցեր.** Հյուսիսային Հայաստանի ՀԿ-ներ:

**Գործունեության ոլորտը.** Գյումրու տնտեսական, մշակութային զարգացում,  
դեմոկրատական արժեքների խրախուսում:

**Գործունեության ձևերը.** Սեմինարներ, մշակութային միջոցառումներ:

**Կատարած միջոցառումները.** Գյումրու միջազգային Բիենալե 2000, 2002, 2004:

**<<Գյումրու կանանց տարածաշրջանային ասոցիացիա>> ՀԿ**

**Հասցե.** Գյումրի, Սարգսյան 6, բն. 3

**Հեռախոս.** +(374 312) 5-18-64

**Կոնտակտային անձ.** Ալվինա Բադալյան

**Հիմնադրման տարին.** 1985թ.

**Գրանցման տարին.** 2001թ.

**Անդամների քանակը.** 17

**Կամավորների քանակը.** 4

**Աշխատակազմի քանակը.** 3

**Գործունեության աշխարհագրությունը.** Գյումրի

**Գործունեության ոլորտը.** Բազմագործառույթ:

**Գործունեության ձևերը.** Դասընթացներ, կլոր սեղաններ, խորհրդատվություն,  
շահերի պաշտպանություն:

**Կատարած միջոցառումները.** <<Երիտասարդ լիդերների դպրոց>>,

<<Երիտասարդական ֆորում>> ծրագրեր:

**<<Գյումրու հաշվանդամ կանանց <<Հավատ>> ՀԿ****Հասցե.** Գյումրի, Անտառավ 4-րդ թաղ., 1ա, բն 3**Հեռախոս.** +(374 93) 45-53-34**Էլ.փոստ.** havatsm@yandex.ru**Կոնտակտային անձ.** Սուսաննա Մելքոնյան**Հիմնադրման տարին.** 2001թ.**Գրանցման տարին.** 2001թ.**Անդամների քանակը.** 9**Կամավորների քանակը.** 8**Աշխատակազմի քանակը.** 2**Գործունեության աշխարհագրությունը.** ՀՀ**Համագործակցության****կամ մասնակցության ցանցեր.** Հայկական Կարիտաս, ԱՄՔՈՐ, Եվրասիա կրթական համալիր:**Գործունեության ոլորտը.** Բազմագործառնություն:**Գործունեության ձևերը.** Ուսուցում, խորհրդատվություն, հոգեբանական աջակցություն, ճամբարների և ժամանցի կազմակերպում:**Կատարած միջոցառումները.** Թեյի ակումբի և ըստ նախասիրությունների խմբակների ստեղծում և ղեկավարում:

10

**<<Գյումրու քաղաքացիական միություն >> ՀԿ****Հասցե.** Գյումրի, Տ. Ճարտարապետի 30, բն. 18**Հեռախոս.** +(374 312) 6-18-19, +(374 77) 61-64-64**Էլ.փոստ.** heghi@mail.ru**Կոնտակտային անձ.** Հեղինե Խաչատրյան**Հիմնադրման տարին.** 1994թ.**Գրանցման տարին.** 1997թ.**Անդամների քանակը.** 20**Կամավորների քանակը.** 13**Աշխատակազմի քանակը.** 3**Գործունեության աշխարհագրությունը.** ՀՀ**Համագործակցության****կամ մասնակցության ցանցեր.** <<Քեմբրիջ-Երևան>> միջազգային միություն:**Գործունեության ոլորտը.** Աջակցություն քաղաքացիական հասարակության ձևավորմանը:**Գործունեության ձևերը.** Դասընթացներ, ուսումնասիրություններ:**Կատարած միջոցառումները.** <<Կիրակնօրյա դպրոց գյուղական դպրոցների ուսուցիչների համար>>, կրթական ծրագրերի շարք:

**ԳՊՄԻ-ի <<Քաղաքացիական կրթության կենտրոն>> ՀԿ**

**Հասցե.** Գյումրի, Պ.Սևակ 4

**Հեռախոս.** +(374 93) 32-66-92

**Էլ.փոստ.** gspi@web.am

**Կոնտակտային անձ.** Աստղիկ Բախալբաշյան

**Հիմնադրման տարին.** 2003թ.

**Գրանցման տարին.** 2003թ.

**Անդամների քանակը.** 7

**Կամավորների քանակը.** 15

**Գործունեության աշխարհագրությունը.** ՀՀ

**Գործունեության ոլորտը.** Քաղաքացիական հասարակություն:

**<<Երաշխիք>> քաղաքացիական հասարակության կենտրոն ՀԿ**

**Հասցե.** Գյումրի, Գ.Նժդեհի 223/051

**Հեռախոս.** +(374 312) 4-34-89, +(374 93) 99-69-16

**Էլ.փոստ.** guarantee-ngo@rambler.ru

**Կոնտակտային անձ.** Սերգեյ Գաբրիելյան

**Հիմնադրման տարին.** 2003թ.

**Գրանցման տարին.** 2003թ.

**Անդամների քանակը.** 7

**Կամավորների քանակը.** 15

**Գործունեության աշխարհագրությունը.** ՀՀ

**Գործունեության ոլորտը.** Ժողովրդավարություն, քաղաքացիական հասարակություն:

**Գործունեության ձևերը.** Խորհրդատվություն, մոնիտորինգ և վերլուծություններ, համայնքային կենտրոնների ստեղծում, կոռուպցիայի և թրաֆիկինգի դեմ պայքար, ՀԿ սեկտորի հզորացում:

**Կատարած միջոցառումները.** Երևանյան խճուղում համայնքային - ժամանցային կենտրոնի ստեղծում, , <<Երիտասարդությունը կարող է>> հակակոռուպցիոն ծրագիր, <<Անչափահասների աջակցման խորհրդի>> ստեղծում:

**<<Ժողովրդավարութ. և եվրոպական ինտեգրաց. ինստիտուտ>> ՀԿ**  
**Հասցե.** գ. Ախուրյան, 14 շ., բն 10  
**Հեռախոս.** +(374 93) 98-88-86  
**Կոնտակտային անձ.** Միսակ Բալասանյան  
**Հիմնադրման տարին.** 2005թ.  
**Գրանցման տարին.** 2006թ.

**<<Խաղաղության հիմնախնդիրների հետազոտման կովկասյան ինստիտուտ>> ՀԿ**  
**Հասցե.** Գյումրի, Շիրակացի 99  
**Հեռախոս.** +(374 312) 4-60-44  
**Կոնտակտային անձ.** Կարեն Մխիթարյան

**<<Ծիծեռնակ կենտրոն>> ՀԿ**  
**Հասցե.** Գյումրի, Խոբենացի 8/11  
**Հեռախոս.** +(374 93) 66-60-25, +(374 93) 09-96-70  
**Կոնտակտային անձ.** Սվետլանա Պապիկյան  
**Հիմնադրման տարին.** 1998թ.  
**Գրանցման տարին.** 1998թ.  
**Անդամների քանակը.** 9  
**Կամավորների քանակը.** 24  
**Աշխատակազմի քանակը.** 2  
**Գործունեության աշխարհագրությունը.** ՀՀ, Արցախ  
**Գործունեության ոլորտը.** Քաղաքացիական հասարակության զարգացում:  
**Գործունեության ձևերը.** Փախստականների ինտեգրացումը  
 հասարակությանը, համայնքային զարգացման ծրագրերի մշակում:  
**Կատարած միջոցառումները.** Կլոր-սեղանների, ցուցահանդեսների,  
 խորհրդատվությունների կազմակերպում և անցկացում:

**<<Կայունություն և առաջընթաց>> ՀԿ**

**Հասցե.** Գյումրի, Գ.Նժդեհի 12ա

**Հեռախոս.** +(374 312) 3-01-50

**Էլ.փոստ.** ndnssp@shirak.am

**Կոնտակտային անձ.** Սերգեյ Նազարեթյան, Հակոբ Սուվարյան

**Հիմնադրման տարին.** 2002թ.

**Գրանցման տարին.** 2002թ.

**Անդամների քանակը.** 78

**Կամավորների քանակը.** 14

**Աշխատակազմի քանակը.** 2

**Գործունեության աշխարհագրությունը.** ՀՀ

**Գործունեության ոլորտը.** Քաղաքացիական հասարակության ձևավորում, բնապահպանություն, թվային տեխնոլոգիայի ներդրում:

**Գործունեության ձևերը.** Որոնողական անալիտիկ հետազոտություններ, դրամաշնորհներ, անհատույց օգնություն բնակչությանը, առանց շահույթի պայմանագրեր:

**Կատարած միջոցառումները.** GIS կենտրոնի ստեղծում իր մասնագիտացված ճյուղերով, Գյումրու ընդհանուր օգտագործման տվյալների թվային բազաների և քարտեզների ստեղծում, Գյումրու կիսակառույց թաղամասերի (Մուշ, Տոնուտ, Մարմաշեն) շենքերի մասին տվյալների բազայի ստեղծում:



**<<Կոնֆլիկտների լուծման ոչ ավանդական միջոցների առաջադրման կովկասյան կենտրոն>> ՀԿ**

**Հասցե.** Գյումրի, Գայի 12

**Հեռախոս.** +(374 312) 4-60-44, +(374 91) 40-85-81

**Էլ.փոստ.** gdf@web.am

**Կոնտակտային անձ.** Արտուշ Մկրտչյան

**Հիմնադրման տարին.** 2001թ.

**Գրանցման տարին.** 2001թ.

**Անդամների քանակը.** 60

**Կամավորների քանակը.** 5

**Աշխատակազմի քանակը.** 7

**Գործունեության աշխարհագրությունը.** Հարավային Կովկաս

**Համագործակցության**

**կամ մասնակցության ցանցեր.** Խաղաղության կովկասյան խումբ:

**Գործունեության ոլորտը.** Տարածաշրջանային համագործակցություն և երկխոսություն, կոնֆլիկտների լուծում:

**Գործունեության ձևերը.** Սեմինարներ, կոնֆերանսներ, հետազոտություններ:

**Կատարած միջոցառումները.** Գավառական քաղաքների հարավ-կովկասյան ֆորում, բիզնես դիրեկտորիա:

**<<Համայնքի աջակցության ծառայություններ>> ՀԿ**

**Հասցե.** Գյումրի, Սպարտակի 1 նրբ., 12 տ.

**Հեռախոս.** +(374 93) 28-13-10

**Էլ.փոստ.** mkrtchyan@mail.ru

**Կոնտակտային անձ.** Լուսինե Մկրտչյան

**Հիմնադրման տարին.** 2004թ.

**Գրանցման տարին.** 2004թ.

**Անդամների քանակը.** 8

**Կամավորների քանակը.** 8

**Աշխատակազմի քանակը.** 2

**Գործունեության աշխարհագրությունը.** Գյումրի

**Գործունեության ոլորտը.** Բազմագործառույթ:

**Գործունեության ձևերը.** Խորհրդատվություն, խմբակների ստեղծում, կարիքների ուսումնասիրություններ, սեմինարներ:

**Կատարած միջոցառումները.** Երեխաների միջոցով օգնություն միայնակ ծերերին, օտար լեզուների անվճար դասընթացներ, մշակութային միջոցառումներ:

**<<Համայնքային նախաձեռնութ. և քարոզչության կենտրոն>> ՀԿ**

**Հասցե.** Գյումրի, Տիգրան Մեծի 12., բն. 2

**Հեռախոս.** +(374 312) 3-82-36, 2-38-12, +(374 93) 40-03-25

**Էլ.փոստ.** mzadoyan@yahoo.com

**Գոնտակտային անձ.** Մարգարետունի Զարոյան

**Հիմնադրման տարին.** 2000թ.

**Գրանցման տարին.** 2002թ.

**Անդամների քանակը.** 18

**Կամավորների քանակը.** 7

**Աշխատակազմի քանակը.** 3

**Գործունեության աշխարհագրությունը.** Շիրակի մարզ

**Համագործակցության**

**կամ մասնակցության ցանցեր.** <<Կաթոլիկ օգնության ծառայություններ>>,

UNDP, UNHCR, CORDAID, <<ՀՀ Երիտասարդ իրավաբանների ասոցիացիա>>:

**Գործունեության ոլորտը.** Իրավական, սոցիալական:

**Գործունեության ձևերը.** Համայնքների զարգացում, սեմինարներ,

դասընթացներ, հանդիպումներ, կլոր սեղաններ, գիտաժողովներ,

խորհրդատվություններ:

**Կատարած միջոցառումները.** Համակարգչային անվճար դասընթացներ,

մասնակցային մոնիտորինգի ներդրումը համայնքներում, փախստականների

շահերի պաշտպանության և կրթական ոլորտի ծարգրերի իրականացում:

Մշտապես գործող ԱԲԲՏԲԱԺ-ի (վեճերի լուծում, խորհրդատվություն)

ստեղծում և գործունեության ծավալում:

**<<Մեղվիկ>> մանկապատանեկան ՀԿ**

**Հասցե.** Գյումրի, Նիզամի 52

**Հեռախոս.** +(374 312) 4-43-27,

**Էլ.փոստ.** meghvik@web.am

**Կոնտակտային անձ.** Վեհանուշ Հովհաննիսյան

**Հիմնադրման տարին.** 1988թ.

**Գրանցման տարին.** 2004թ.

**Անդամների քանակը.** 25

**Կամավորների քանակը.** 15

**Աշխատակազմի քանակը.** 10

**Գործունեության աշխարհագրությունը.** ՀՀ

**Համագործակցության**

**կամ մասնակցության ցանցեր.** Հայաստանի Սոցիալական Ներդրումների

Հիմնադրամ, ԱՀՀ ուսուցման և տեղեկատվության կենտրոն, Հայաստանի

պատանի նվաճումներ, Խաղաղության կորպուս, Փրկեք

